

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականին քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականին քաղաքացիներից ստացվել է 2051 դիմում, որից 2010-ը՝ աջակցության խնդրանքով, 29-ը՝ բողոք, 5-ը՝ առաջարկություն, 7-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 95 դիմումներին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 242 դիմումներից դրական լուծում է ստացել 38-ը, մյուսները վերցվել են հաշվառման:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 106 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 1068 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 1009 հոգու: Անվճար բուժսպասարկման հարցով դիմած 117 քաղաքացիներից բավարարվել է 107-ի խնդրանքը, 21 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 79 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2016 թվականին կատարվել է 808 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: